ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

09 հուլիսի 2021 թվականի գյուղ Տեղ

Մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 8 անդամներից՝

Սևադա Դանիելյանը
Մասիս Մկրտչյանը
Համեստ Հակոբյանը
Սիլվա Գալստյանը
Նարինե Ջհանգիրյանը
Սենիկ Փարսյանը

Բացակայում էին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու անդամներ՝

Արտակ Աղաջանյանը
Արգամ Լալայանը

Մասնակցում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

Հրավիրված էին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքի բնակիչներ:

Նիստը վարում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

Նիստի արձանագրումն ապահովում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Բաղդագյուլյանը:

Նիստն սկսվեց ժամը 14.00-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի **ավագանին.**

1. **Լսեց Նիստի օրակարգի մասին:** Նիստը վարող Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը ներկայացրեց նիստի օրակարգի նախագիծը և առաջարկեց հաստատել այն: Այլ առաջարկություններ չեղան:

Որոշեց (N 21)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու2021 թվականի հուլիսի 9-ինիստի հետևյալ օրակարգը.

1. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի ընթացքի մասին:**
2. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N 35-Ն որոշման մեջփոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**
3. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 19-ի N 7-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:**
4. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի համակցված փաստաթղթում փոփոխություն կատարելու, հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը հողամաս օտարելու մասին:**

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

2. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի ընթացքի մասին:**
(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N 22)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով,«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով,Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի բյուջեի 2021 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-6 հատվածների:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6. դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

3. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N 35-Ն որոշման մեջփոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**
(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N 23)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական

ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 35-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N1, N2, N3, N4 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6. դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

4. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 19-ի N 7-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:**

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N 24)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021թվականի մարտի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2020թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին>>N 7-Ա որոշման հավելվածում կատարել փոփոխություն, համայնքային սեփականություն հանդիսացող գույքագրման փաստաթղթերում կատարել լրացում և գույքացանկ ներառել.
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի կողմից ձեռք բերված 1 հատ ինքնաթափ մեքենան՝ 38000000(երեսունութ միլիոն) ՀՀ դրամ արժեքով (մակնիշը՝ ՄԱԶ-650126-584-000, VIN կոդը՝ N Y3M650126L0000064, արտադրման տարեթիվը՝ 2020թ., շարժիչը՝ WP7.300E51, N 1018L028809):
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6. դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

5. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի համակցված փաստաթղթում փոփոխություն կատարելու, հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը հողամաս օտարելու մասին:**

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N 25)՝

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ինմասի 21-րդ և 29-րդ կետերով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ և 63-րդ հոդվածների դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման և հաշվի առնելով ՀՀ վարչապետի 2009թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 25-ի N 2/փ-204 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում կատարել փոփոխություն և համաձայն հավելվածի, որպես առաջնահերթ միջոցառում, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,3219 հեկտար այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-101-0104-0003-ից) փոխադրել հատուկ նշանակության հողերի կատեգորիա:
2. Սույն որոշման 1-ին կետով հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրված 0,3219 հեկտար մակերեսով հողամասը, պաշտպանական նպատակներով օգտագործելու համար, անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվության) օտարել Հայաստանի Հանրապետությանը:
3. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6. դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

Օրակարգի բոլոր հարցերն սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 16.15-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ավագանու անդամներ՝

1 Սևադա Դանիելյան
2 Մասիս Մկրտչյան
3 Համեստ Հակոբյան
4 Սիլվա Գալստյան
5 Նարինե Ջհանգիրյան
6 Սենիկ Փարսյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց